

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ

ԱրՊՀ, ք. գ. թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն,

E-mail: silvaminasyan50@mail.ru

XX ԴԱՐԻ ՄԵԾ ԼԵԶՎԱԲԱՆԸ (Աշոտ Աբրահամյան-100)

Անվանի գիտնական Աշոտ Արսենի Աբրահամյանը XX դարի արևելահայ լեզվաբանության հանրահռչակ ներկայացուցիչներից է՝ բայի մանրամասնված, համակողմանի գիտականորեն հետազոտած դեմքերից: Այդ խոսքի մասի անդեմ ու դիմավոր ձևերի՝ ծագումնաբանական, պատմական քննարկումների, բառական-քերականական կազմության, սեռի քերականական կարգի համակողմանի ու նորարարական դիտարկման ներկայացրած հեղինակ էր: Բայ խոսքի մասն այդ ժամանակահատվածում ուսումնասիրության էր ենթարկվել շատ լեզվաբանների կողմից՝ տարբեր տեսանկյուններով, իսկ Ա. Ա. Աբրահամյանը նոր ձևով էր քննարկել հատկապես բայասեռի քերականական կարգի հարցը՝ սեռադաս (անցողական ու անանցողական), սեռ, սեռային առում (պատճառական, միջին-անդրադարձ), կրկնասեռություն՝ հազեցած գիտական նորակազմ բառերով:

Բանայի բառեր՝ Բայ, դերբայ/ընդունելություն՝ անորոշ (աներևույթ), անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտման (ըդական), դիմավոր կամ եղանակային ձևեր, սեռադաս՝ անցողական, անանցողական, սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոք, կրկնասեռ, սեռային առում՝ միջին-անդրադարձ, պատճառական:

С.Минасян

ЗНАМЕНИТЫЙ УЧЕНЫЙ 20-ОГО ВЕКА

/ Ашот Абрамян -100/

Известный ученый Абрамян Ашот Арсенович - один из ярких представителей восточно-армянской лингвистики двадцатого века, подробно и научно изучивший глагол, этимологию грамматической категории вида этой части речи, исторических диспутов, словесно грамматического состава, новаторского и подробного исследования грамматической категории языка. В этот период времени многие языковеды изучали глагол как часть речи, а А.А.Абрамян новаторски подошел к изучению именно вопроса грамматической категории залога: переходные и непереходные, залог и его значение (побудительное,

средневозвратное) и повтор залога, насыщенное новыми словами – терминами.

Ключевые слова: *глагол, причастие, неопределенный, несовершенный, причастие будущего времени, деепричастие прошедшего времени, отрицательные (изъявительные), личные формы или формы наклонения, переходный, непереходный, действительный залог, страдательный залог, значение залога: средневозвратное и побудительное.*

S.Minasyan

**THE XX CENTURY'S FAMOUS LINGUISTIC SCIENTIST
/ Ashot Abrahamyan -100 /**

Famous scientist Ashot A.Abrahamyan - one of the brightest representatives of the Eastern Armenian linguistics of the twentieth century, studied verb in detail and scientifically, etymology of grammatical category of this part of speech, historical disputes, verbal grammatical structure, innovative and detailed study of the grammatical categories of language. During this time, many linguists have studied the verb as a part of speech, and A.A.Abramyan innovatively approached the study was the question of the grammatical categories of collateral: transitive and intransitive, collateral and its value (causative, medium-term) and repeat of the voice, full of new words -terms.

Keywords: *verb, participle / indefinite, imperfect, participle of the future tense, gerundive of past tense, negative (indicative), personal forms or forms of inclination, transitive, intransitive, active voice, passive voice, value of voice: middle-term and causative.*

Աշոտ Արսենի Աբրահամյանը (1918-1985) ծնվել է Սևանի հյուսիս-արևմտյան լեռնահովտային մոտակա Գեղամավան գյուղում՝ շինականի ընտանիքում: Փոքրուց ծանոթ էր տնտեսական աշխատանքներին և հորթ ու գառ պահելու աշխատանքներին: Հրագրանի դպրարագել ավիին գառներն ու հորթերը պահելիս, հիացել էր բնության սքանչելի հրաշալիքներով՝ ջանասիրաբար օգնելով իրենց տնտեսությանը: Տարրական կրթությունը ստացել է ծննդավայրում, միջին դասարաններն ավարտել է շրջանային դպրոցում, միջնակարգը՝ Երևանում: 1937 թ. ուսուցչական աշխատանքի էր անցել Հրագրանի (Ախտա) շրջանային գյուղերում՝ դասավանդելով հայոց լեզու և գրականություն: Եղել է նաև ուսմասվարի, տնօրենի պաշտոններում: Երիտասարդ հասակում սքանչացել է սրտի թագուհու հմայքներով (1940 թ. երկու տասնյակից ավելի բանաստեղծություններ են պահպանվում՝ զուգակցված հայրենի սքանչելի բնաշխարհին ու հայրենիքին): Մեծ լեզվաբան Աշոտ Աբրահամյանը բուհն ավարտել է հեռակա՝ աչքի ընկնելով իր արտակարգ մտածողությամբ ու քննադատական մտքով: 1944-47 թթ. նույն ձևով շարունակել է ասպիրանտուրան, իսկ 1948 թ. պաշտպանել թեկնածուականը: 1949 թ. ստացել դոցենտի կոչում: 1943/44 ուսումնական տարուց մինչև կյանքի վերջը դասախոսական աշխատանքի էր անցել Խ. Աբովյանի անվան ինստիտուտում՝ դասավանդելով գրաբար, ժամանակակից հայոց լեզու ու լեզվաբանություն և ուներ իր ընտանիքը (չորս դստեր հայր էր): 1950/59 թթ. աշխատել է նաև գիտությունների ակադեմիայում ու հայոց լեզվի սեկտորի վարիչ էր. այնուհետև՝ բուհական, իր հիմնական

աշխատանքին զուգահեռ, նաև այստեղի գիտական խորհրդում: Խ. Արուսյանի անվան ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչ էր 1960 թ.: 1963 թ. անվանի գիտնականը պաշտպանել է դոկտորական դիսերտացիա Բայագիտությունից, 1964 թ. ստացել պրոֆեսորի պաշտոն, հետո նաև ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ էր, գիտության վաստակավոր գործիչ¹ (1965 թ.): Նա հիմնականում զբաղվել է հայոց լեզվի պատմական քերականության, գրաբարի և ժամանակակից հայերենի բայագիտական հարցերով ու որպես խորահմուտ մասնագետ՝ հայտնի լեզվաբանների ուշադրության կենտրոնում էր: Նաև լեզվի ավանդման գիտամեթոդական խնդիրներով էր հետամուտ եղել: Մեծանուն Ա. Ա. Աբրահամյանը «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը»² գրքում հայ քերականագիտության պատմության մեջ (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բարբառներ) բազմակողմանի համառոտ ու լուրջ տվել է դերբայների մասին եղած գիտական տարբեր ըմբռնումների, վերլուծությունների համառոտ պատմությունն ու իր քննարկումները: Գիրքը բաղկացած է երեք մասից: Այս կապակցությամբ անվանի լեզվաբան Էդ. Աղայանը քննարկել է այդ երեք մասերը ու տվել իր բարյացակամ վերաբերմունքը «Հայ լեզվաբանության պատմություն»³ աշխատության II հատորում, հատկապես դերբայներն այլ խոսքի մաս չհամարելու կապակցությամբ: Ահա մեծանուն գիտնական Ա. Ա. Աբրահամյանի կատարած ընդհանրացումը. «Դերբայը ուրույն քերականական հասկացություն է, բայց ոչ ուրույն խոսքի մաս, իսկ սրանից բնավ էլ չպետք է եզրակացնել, թե այն խոսքի մասերից դուրս է առհասարակ: Որպես խոսքի մաս դերբայը նույն բայն է: ...Բայը խոսքի մեջ դրսևորվում է երկու ձևով՝ դիմավոր և դերբայական: Ուրեմն՝ դերբայը բայի՝ խոսքի մեջ դրսևորման մի ձևն⁴ է»:

Մեծանուն գիտնականն այս աշխատության առաջին մասում քննարկել է դերբայները, որպես բայ խոսքի մասի բաղադրիչ, V դարից առ իր ապրած ժամանակահատվածը: II մասում վեր է լուծել հնագույն ձևերը, հետագա զարգացումները, հատկապես –ում, –իս, –ած (–ուած) դրսևորումները մատենագիտությունում և դրանց զարգացումն ու արդի վիճակը, բարբառներում եղած իրողությունները: Էդ. Աղայանի անվանած *մակբայական դերբայի* անկատարի II-ական ձև է կոչել (Էդ. Աղայանի՝ Մեղրու բարբառի քննարկումները հատվածում՝ անորոշ դերբայի –ի փոխարկումը –ս-ի⁵ և այլը. այդ դերբայն ուներ անկատարի II-ական ձև անվանումը, իսկ հիմա՝ համակատար, *զուգընթացական*⁶): III գլխում դերբայների ձևաբանական դերի մանրագննիս ուսումնասիրությունն է

¹ Էդ. Աղայան, *Հայ լեզվաբանության պատմություն*, հ. II, էջ 376-379, Ե., ԵՊՀ հրտկչ., 1962 թ., 388 էջ, Ն. Զ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, էջ 11, Ե., Հայաստան հրտկչ., 1987 թ., 686 էջ, Ա. Ա. Աբրահամյան, *Հայագիտական հետազոտություններ, մտորումներ, խոհեր*, Ե. Գիտ., Արտագերս հրտկչ., 2001 թ., 184 էջ:

² Ա. Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրտկչ., 1953 թ., 440 էջ:

³ Էդ. Աղայան, *Հայ լեզվաբանության պատմություն*, հ. II, էջ 376-379, Ե., ԵՊՀ հրտկչ., 1962 թ., 388 էջ:

⁴ Ա. Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, էջ 41, Ե., 1959 թ.:

⁵ Ն. տ., էջ 106, 107:

⁶ Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Ն. Ա. Օհանյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. II (ձևաբ.), էջ 316, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., 1974 թ., 588 էջ:

փաստական հարուստ նյութերի հիման վրա: Բնական է, գրքի սկզբում ստալինյան, մատական մոտեցումներ են շոշափված, ինչպես նաև կիրառված են արդի հայեցակետով մի շարք անհարկի օտարաբանություններ: Ժամանակին ռուսերենից կատարված փոխառություններ էին ցանկացել համարել: Օրինակ, *տրադիցիա* բառը կիրառված է այսպես. «*Գաբրիել Ավետիսյանը հիմնական հարցերում չհաստատելով տրադիցիան* (սրա մոտ էլ դերբայն աներևույթ եղանակ է, մյուս դերբայները՝ ընդունելություն, վերջինս էլ առանձին խոսքի մաս է), *առարկում է այն քերականներին որոնք ընդունելություն տերմինը չեն բացատրում բայի և անվան հատկությունների ընդունումով*» (էջ 27): Դեռևս Ստ. Մալխասյանցն¹ իր «*Հայերեն բացատրական բառարան*»-ում նշել էր հայկականը՝ *Աւանդություն*, որն ավելի հարմար ձևով կարելի էր նշել՝ *սովորությունը* նն: Եվ այդպես այլ բառեր *դիֆերենցիայի* փորձ է կատարվում (էջ 17), իբրև *իլյուստրացիա* (էջ 16), կատեգորիա (էջ 25), կոնցեպցիա (էջ 32) և այլն: Որպես լեզվաբան՝ արժեք , որ ուշադրություն դարձներ:

Ա. Ա. Աբրահամյանի հաջորդ հանրահայտ աշխատանքը բուհական դասագրքի արժեք ունի: Դա «*Գրաբարի ձեռնարկ*»-ն² է, որտեղ շատ հաջող համակարգված ներկայացված էր *ձևաբանություն* բաժինը (գրքին կցված են գործնականների համար հաջող ընտրված բնագրեր, ծանոթագրություններ ու բառարան): Այդ դասագրքի բոլոր հրատարակություններն ուսանողների համար առաջնակարգ դասագրքեր էին:

Հայերենին անվանի նվիրյալի գիտական աշխատությունների փառքը «*Բայր ժամանակակից հայերենում*» աշխատությունն³ է (դրանով հեղինակին շնորհվել էր բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան): Այս աշխատությունը XX դարի բայագիտական⁴ նվաճումների գիտական խոր ու համակողմանի առաջընթացն էր: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բ. Հ. Վերդյանը⁵ նշել է. «Այս աշխատությունն աչքի է ընկնում հայ դասական լեզվաբանության և արդի լեզվաբանական մտքի նվաճումների ստեղծագործական համադրությամբ ու գիտական նորություններով: Բավական է միայն վերցնել հայերենի բայի ծագման ու կազմավորման և բայական սեռին հատկացված բաժինները, որպեսզի անմիջապես զգացվեն գիտական խիզախումը, հեղինակի պրպտող միտքն ու գիտական հայտնագործությունների անակնկալ հաճույքը: Ոչ

¹ Ստ.Մալխասյանց, էջ 443, ֆրանսերենից ռուսերեն, *Հայերեն բացատրական բառարան*, հ. IV, Ե., ՀՍՍՌ պետական հրտկչ., 1945 թ., 618 էջ:

² Ա. Ա.Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ* (I հրտկ-ը՝ 1952 թ., այնուհետև վերահրտրկ-ը), IV հրատկյթ., Ե., Լույս հրտկչ., 1976 թ., 588 էջ:

³ Ա. Ա.Աբրահամյան, *Բայր ժամանակակից հայերենում*, գիրք I, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրտկչ., 1962 թ., 730 էջ:

⁴ Կային նոր հրատարակված հետևյալ աշխատությունները՝ Հ. Խ. Բարսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Ե., 1953 թ., Մ. Ե.Սասարյան, *Բայի սեռերը ժամանակակից հայերենում*, Ե., 1959 թ., Պ. Մ.Պողոսյան, *Բայի եղանակային ձևերի ոճական կիրառություններն արդի հայերենում*, Ե., 1959 թ., Ա. Ա.Մուրվալյան, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայականություն*, Ե., 1959 թ., Թ. Գ Ջուհարյան., *Բայի ուսուցման հիմնական հարցերը*, Ե., 1956 թ.:

⁵ Բ. Հ. Վերդյան, *Համակ նվիրում*, էջ 19 (Ա.Ա.Աբրահամյան, *Հայագիտական հետազոտություններ, մտորումներ, խոհեր*, Գիտ. Ե., Արտագերս հրտկչ., 2001 թ., 184 էջ):

միայն հայ, այլև ընդհանուր լեզվաբանության համար մեծ արժեք են ներկայացնում հայերենում բայական կրկնասեռության, նրա դրսևորումների ու պատճառների քննությունը»:

Մեծանուն լեզվաբան Ա. Ա. Աբրահամյանն այս աշխատությունում մանրամասնված ուշադրություն է դարձրել բայերի համադրական և վելուծական (հարադրական) կազմության երկու հիմնական տիպերին (բառակազմական ու քերականական հարադրությունների տարբերակումներին և այլն): Համադրական բայերում քննարկվել են այլ խոսքի մասերից համապատասխան ձևություններով նոր խոսքի մաս կերտելու իրողությունները: Կատարված են նաև անվանակազմ բայերի իմաստային խմբավորումներ: Կրկնավոր բայերը քննարկված են վաղնջահայերենի շրջանից առ իր ապրած ժամանակահատվածը՝ ներառյալ բնաձայնականները: Փոխառյալ բայերի վերակազմական ձևերն են մանրամասնված ուշադրության արժանացել: Դրանք կատարված են հին, նոր, նորագույն փաստերով, համապատասխան մասնիկների առանձնացմամբ: Ածանցական բայատիպարների բաժնում ցույց են տրված սկզբնատիպ բայերի ածանցավոր և ածանցագուրկների փոխհարաբերությունը: Նույնիսկ ուշադրություն էր դարձրել կրավորական ձևով ներգործական բայերի պատահական կիրառություններին: Օրինակ՝ Խնկո-Ապրո հանրահայտ «Խոզն ու ագռավը» չափածո առակի հանգի գոհ բայական ներգործական սեռի բառաձևում անհարկի –վ-ին՝ Խոզն ազահ ու անհազ այնքան կաղին *զխտվեց՝* // Որ ցած ընկավ ու փովեց (*զխտել* խոսակցական բայը ներգործական սեռի է): Այստեղ շեշտված է այդ բայի գեղագիտական սխալը, որը մեծ ճանաչում ունենալու պատճառով հասարակության շրջանակներում այդպիսի կառուցվածքով ճանաչում գտավ (արհամարհական, անարգական ոճի խոսակցական այս բայը Հր. Աճառյանի «Գաւառական բառարան»-ում² տեղ ունի բարբառային արտահայտություն ձևով՝ Մշո բարբառ (ներգործաձև)՝ *զխտել*, Վանի բարբառ (կրավորաձև և -կ ածանցով)՝ *զխկուիլ*, նաև *զխտել* // -վել ձևով: Որպես արևելահայերեն խոսակցական բառ՝ այն Հ. Խ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան»-ում³ է հիշված, բայց –վ-ի անհարկի լինելը նշված չէ:

Լծորդությունները, իբրև բայերի կառուցվածքային քերականական ամենաընդհանուր խմբավորումներ, Ա. Ա. Աբրահամյանի կողմից ցույց են տրվել փոփոխությունների (*լծորդափոխական երևույթ*⁴) ու համահարթումների իրողություններում: Դրանք կրկնալծորդությունների և այլ բաժիններում են քննարկվել:

Բայահիմքերն ուսումնասիրվել են բայերի քերականական ձևակազմության մեջ, հատկապես հիմքի ցոյական տեսակի լայն տարածման, դրա հանդեպ անցյալական տեսակի սահմանափակման, բայերի ածանցական տիպարների պատմական փոփոխությունների ու ածանցական արդի ձևակազմության

¹ Ա. Ա. Աբրահամյան, էջ 657, *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք I, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրտկչ., 1962 թ., 730 էջ:

² Հր. Աճառյան, *Գաւառական բառարան*, էջ 321, Թիֆլիս, 1913 թ., 1142 էջ :

³ Հ. Խ. Բարսեղյան, *Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան*, էջ 316, Ե., Լույս հրտկչ., 1973 թ., 978 էջ:

⁴ *Լծորդափոխական երևույթ*, էջ 315, Ա. Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք I, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրտկչ., 1962 թ., 730 էջ:

հետևանքով հիմքերի մեջ առաջացող փոփոխությունների և հարակից այլ երևույթների մասին եղած օրինակներում:

Մեռի կարգը լուսաբանելիս (երեք սեռը՝ ներգործական, չեզոք (սրանք սկզբնասեռ կամ հիմնասեռ) և կրավորական) *անցողականության* (ուղիղ խնդիր ընդունելը) և *անանցողականության* հարցերով են լուսաբանվել: Դրանք համարվել են *սեռադասեր*¹, իսկ իսկ պատճառականը և միջին-անդրադարձը՝ *սեռային առումներ*² են:

Ա. Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» աշխատությունը պարունակում է նաև առ այսօր բառարաններ չմտած լեզվաբանական նորակազմ գիտաբառեր³ բայագիտությունից, ինչպես՝ լծորդափոխական (315), հիմնասեռ, սկզբնաձևային, սկզբնասեռ (էջ 512), սեռադաս (էջ 9, 517) և այլն:

Մեծ ճանաչում ստացած լավագույն լեզվաբան Ա. Ա. Աբրահամյանը հեղինակ է նաև բազմաթիվ արժեքավոր գիտական հոդվածների, որտեղ քննարկվել են պատմական հնչյունափոխության, բայական կրկնասեռության, ժամանակակից հայերենի կրկնավոր բայերի, փոխառությունների հետ կապված բայակազմական մի շարք իրողություններ և այլ հարցեր: Նա գրաբարից ժամանակակից հայերենով թարգմանել էր նաև Եզնիկ Կողբացու մեծարժեք «*Եղծ աղանդոց*»-ը՝ համապատասխան հմուտ ծանոթագրություններով և գիտական առաջաբանով: Հաջորդ թարգմանած գործը Ստեփանոս Օրբելյանի (անհայտ-1305) «*Մյունիքի պատմությունն*» է՝ էլի համապատասխան առաջաբանով (լատիներեն, ֆրանսերեն, ռուսերեն, վրացերեն թարգմանություններին էլ էր անդրադարձել): Երախտաշատ հեղինակ Ա. Ա. Աբրահամյանը գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր, ղեկավարել և օժանդակել էր բազմաթիվ սկսնակ ու որոշ ծառայություն ունեցած լեզվաբանների գիտական աշխատությունների իրացմանն ու հեղինակների համապատասխան գիտական աստիճանին հասնելուն: Նա գիտական բնագավառի վաստակավոր գործիչ էր և ուներ արտակարգ հիշողություն (անգամ հիշում էր, թե որ ատենախոս (դիսերտանտ) երբ և ինչ թեմա էր ստացել ու ինչ գործ է կատարել այդ կապակցությամբ կամ չի կատարել երեք տարվա ընթացքում: Զլացողներին կամ ինչ- որ այլ պատճառներով չկատարողներին զրկել է այդ թեմայից, եթե նորից էին դիմել, տվել էր մեկ ուրիշը: Մենք (Ս.Ս.) դա զգացել ենք մեր մաշկի վրա: Այդպիսի անաչառ վերաբերմունք երեք տարին մոռացողների նկատմամբ սխալ չէր: Օրինակ՝ ես հիվանդանոցներում շատ էի եղել ու երեք տարում աշխատանքի ու ընտանեկան պարտակա-

¹ Ն. տ., էջ 517:

² Ն. տ., էջ 516:

³ Համեմատված են հետևյալ բառարանների հետ՝ Հ. Խ. Բարսեղյան, *Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տեղմիներբանական բառարան*, էջ 316, Ե., Լույս հրտկչ., 1973 թ., 978 էջ, *Ժամանակակից հայերենի բացատրական բառարան*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., հ. II, 1972 թ., 716 էջ, հ. III, 1974 թ., 576 էջ, հ. IV, 1980 թ., 828 էջ, Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, *Լեզվաբանական բառարան*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., 1975 թ., 318 էջ, Աղայան Էդ., *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., Հայաստան հրտկչ., 1976 թ., 1616 էջ, Խլղայան Ֆ. Հ., *Բառարան-տեղեկատու* (սոբ բառեր և իմաստներ), Ե., Հայաստան հրտկչ., 1982 թ., 168 էջ, Հ. Զ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, Ե., Հայաստան հրտկչ., 1987 թ., 686 էջ, Սեդա Էլոյան, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Ե., Նաիրի հրտկչ., 2002 թ., 492 էջ:

նությունների հետ չէի հասցրել ու չէի էլ հասկացել տրված ժամկետը (հատուկ փաստաթղթեր չէի տրվել): Աղեկտուր արցունքներս իբր չնկատելով՝ մեղմ ու հոգատարությամբ ասել էր. «Մտ. Ջորջանի նորավեպերի վրա կատարած աշխատանքը ժամանակին չես բերել, հիմա էլ Հովհ. Շիրազի պոեմների վրա աշխատիր» (այդ ժամանակ գրական թերթում ընթերցել էի մեծանուն բանաստեղծի «Խաղաղություն ամենեցուն» պոեմից հատված և հիացական նամակ էի գրել հեղինակին՝ բառաստեղծական անկրկնելի տաղանդի վերաբերյալ, հատկապես հատուկ անունից բայ ստեղծելը՝ մասիսվել և այլն. սա նշեցի, լուսահոգի Ա. Աբրահամյանն իսկույն հանգիստ ասաց. «Քո թեման պատրաստ է, միայն արագ աշխատի՛ր, կանացի գործերից մի քիչ հեռու մնա՛ » և տխրամած աչքերով նայեց անորոշության): Ցավոք, անգութ մահը չթողեց, որ նա տեսներ շիրազապաշտի գիտական հաջողությունը, որն ադրբեջանահպատակ Արցախում մեծ հանդգնություն էր (միշտ ՊԱԿ-ի (ԿԿԵ) հսկողության տակ էի): Մեծ գիտնականին բացարձակ ճերմակահեր էի տեսել: Ասում էին, որ թույլ սովորող մի ուսանողուհու դիտողություն էր արել երկրորդ անգամ վերաքննությունից անբավարար ստանալու համար (նա զգուշացրել էր, որ III-ի անհաջողությունը դուրս մնալու վտանգ է ստեղծելու): Ուսանողուհին լուռ դուրս էր եկել ու գնացել Հրազդանի կամուրջից իրեն նետել և հոգին ավանդել, երբ այդ լուրը փոխանցել են Ա. Ա. Աբրահամյանին, գիշերը մազերը լրիվ ճերմակել են քնած ժամանակ, երևի մտքում եղած ահավոր ապրումների պատճառով, թեկուզ ինքն անմեղ էր (անզիջում էր մայրենիի նկատմամբ անտարբեր սովորողների նկատմամբ, միայն *վերինի*, հատկապես ՊԱԿ-ի նկատմամբ էր խեղճանում, որովհետև դրա դառը պատմությունը հոյակապ էր հիշում...):

Մեծանուն հեղինակի ծննդյան հարյուրամյակն է: Հայ լեզվաբանության պատմությունում միշտ արժանահիշատակ կհիշվի մեծավաստակ գիտնականը, մայրենիի անաչառ ու բարեխիղճ նվիրյալը, մեծ ուսուցիչ Ա.Ա.Աբրահամյանը:

Տողվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.թ. Հ.Մ.Ղազարյանը: